ՎՐԱՍՏԱՆ

«ՑՐԱՆՏԱՆՈ» (ԱԺԱՐՈՅՑԵԼՈ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 25 - 26 (16726) ՇԱԲԱԹ 30 ՄԱՐՏԻ 2019 Թ. ԳԻՆԸ՝ 40 ԹԵԹՐԻ

ՎՐԱՍՏԱՆ - ՆԱՏՕ

ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՈՐԱՑՄԱՆ ՊԱՏՐԱՍՏԱԿԱՄՈՒԹՅՈՒՆ

Ինչպես արդեն հաղորդել ենք, Թբիլիսիի մոտակայքի «Կրծանիսիի» վարժարանում անց էին կացվում NATO - Georgia Exercise 2019 Վրաստանի հրամանատարաշտաբային զորավարժությունները, որին մասնակցում էին ալյանսի անդամ եւ դաշնակից 24 երկրների ներկայացուցիչներ:

Զորավարժությունների ավարտի կապակցությամբ, մարտի 24-ին Վրաստան ժամանեց ՆԱՏՕ-ի գլխավոր քատուղար Յենս Ստոլտենբերգը:

Վրաստանի վարչապետ Մամուկա Բախտաձեի եւ ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Ենս Ստոլտենբերգի՝ այդ օրը կայացած հանդիպմանը կողմերը քննարկեցին Դաշինքում երկրի ինտեգրման ու այդ ուղղությամբ համագործակցության խորացման հարցեր:

Հանդիպման ավարտին հաջորդած համատեղ մամլո ասուլիսին ընդգծվեց, որ ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարի սույն այցը հաստատում է Վրաս-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԱՅՑ

ՎՐԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ՍԵՐԲԻԱՅՈՒՄ

Վրաստանի խորհրդարանի նախագահ Իրակլի Կոբախիձեն, խորհրդարանական պատվիրակության հետ միասին, երկօրյա պաշտոնական այցով գտնվում էր Սերբիայում:

Այցի շրջանակներում, Վրաստանի խորհրդարանի նախագահը հանդիպումներ ունեցավ Սերբիայի նախագահ Ալեքսանդար Վուչիչի, վարչապետ Աննա Բրնաբիչի, Սերբիայի Ազգային ասամբլեայի (խորհրդարանի) նախագահ Մայա Գոյկովիչի, տեղի խորհրդարանական պավիրակության հետ: Իրակլի Կոբախիձեն հանդիպում ունեցավ նաեւ Սերբիայի Պատրիարք Իրինեոսի հետ:

Հանդիպումներին կողմերը քննարկեցին երկկողմ հարաբերությունների, միջխորհրդարանա-

(Շարունակությունը՝ 3-րդ էջում)

ՀԱՄԱԺՈՂՈՎ

ՄԱՄՈՒԿԱ ԲԱԽՏԱՁԵ. «ՄԵՐ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՀԶՈՐ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐՆ ԵՆ»

Մարտի 29-ին Թբիլիսիում աշխատանքն սկսեց ոչ կառավարական կազմակերպությունների «ժողովրդին ավելի մոտ - ավելի ուժեղ քաղաքացիական հասարակություն» համաժողովը:

Համաժողովի բացմանը խոսքով հանդես եկավ Վրաստանի վարչապետ Մամուկա Բախտաձեն: Իր խոսքում, ողջունելով ոչ կառավարական կազմակերպություններին, վարչապետը նշեց, որ երկրի զարգացումը հնարավոր չէ պատկերացնել առանց քաղաքացիական սեկտորի ակտիվ ներգրավվածության, եւ արդյունավետ եվրաինտեգրման համար մեծ է այդ կազմակերպությունների դերը:

- Քաղաքացիական սեկտորը ներառված է Եվրամիության հետ Ասոցիացման համաձայնագրի յուրաքանչյուր փուլում: Մենք, քաղաքացիական սեկտորի եւ ակտիվ բնակչության հետ միասին,

(Շարունակությունը՝ 3-րդ էջում)

ԵՎՐԱԻՆՏԵԳՐՈՒՄ

ԴՐԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆ՝ ՎՐԱՍՏԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԳՐԱՆՑՎԱԾ ԱՌԱՋԸՆԹԱՑԻՆ

Եվրամիություն-Վրաստան ասոցիացման խորհրդարանային կոմիտեն, համանախագահների, Վրաստանի խորհրդարանի Եվրոպայի հետ ինտեգրման կոմիտեի նախագահ Թամար Խուլորդավայի եւ Եվրախորհրդարանի անդամ Սաջադ Կարիմի ղեկավարությամբ անցկացրել է հերթական՝ 8-րդ նիստը:

Նիստին քննարկել են Ասոցիացման համաձայնագրի իրականացման գործընթացը, երկրում ընթացող եւ ծրագրվող ժողովրդավարական բարեփոխումները, մարդու իրավունքների պաշտպանության տեսանկյունից գոյություն ունեցող իրավիճակը, խորը եւ համապարփակ ազատ առեւտրական գոտու մասին համաձայնության օգտագործման հեռանկարները, գյուղատնտեսության զարգացումը, էներգետիկայի ոլորտում Եվրամիության հետ համագործակցությունը:

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

ՎՐԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԵՐԻ ՈՉ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

Մարտի 24-ին Հայաստանում, Տավուշի մարզի Ենոքավան գյուղում, կայացավ Վրաստանի եւ Հայաստանի վարչապետեր Մամուկա Բախտաձեի եւ Նիկոլ Փաշինյանի ոչ պաշտոնական հանդիպումը:

Տարածված հաղորդագրության համաձայն, կողմերը քննարկեցին հարցեր, որոնք ներկայացնում են վրաց-հայկական հարաբերությունների երկկողմ հետաքրքրությունների առարկա:

Երկու երկրների վարչապետերն ընդգծեցին վրաց-հայկական հարաբերությունների կարեւորությունը բոլոր ոլորտներում եւ համոզմունք հայտնեցին, որ հետագա ակտիվ փոխգործակցությունը կնպաստի երկու հարեւան ու բարեկամ պետությունների միջեւ մի շարք ուղղություններով համագործակցության զարգացմանը եւ ընդլայնմանը:

Այս համատեքստում կողմերը կարեւորեցին ոչ միայն պաշտոնական, այլ նաեւ նման ոչ ֆորմալ հանդիպումների հաճախակի անցկացումը:

Հիշեցնենք, որ Մամուկա Բախտաձեի եւ Նիկոլ Փաշինյանի նախորդ՝ ոչ պաշտոնական հանդիպումը տեղի էր ունեցել ընթացիկ տարվա հունվարի 15-ին, Վրաստանի Բոլնիսի քաղաքում:

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆ. «ՀԱՅԱՍՏԱՆՆ ՈՒ ՎՐԱՍՏԱՆԸ ԿԱՐԵՎՈՐՈՒՄ ԵՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ»



Մարտի 27-ին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը Հայաստանի Ազգային ժողովում, կառավարության հետ հարցուպատասխանի ժամանակ, մանրամասն ներկայացրեց ջավախահայության համար կարեւոր նշանակություն ունեցող Նինոծմինդա-Բավրա ճանապարհահատվածի շինարարությունը սկսելու գործընթացը, սակայն ընդգծեց, որ Հայաստանն ու Վրաստանը հիմա հարցերի ավելի լայն շրջանակ են քննարկում տարածաշրջանային ծրագրերի իրականացման առումով:

Պատասխանելով «Իմ քայլը» խմբակցության պատգամավորի հարցին՝ հիշեցրեց, որ այդ հարցը քննարկել է Վրաստանի թե' նախկին, թե' գործող վարչապետերի հետ:

- Եվ տվյալ համատեքստում մեզ արդեն հետաքրքրում է ոչ միայն Նինոծմինդա-Բավրա հատվածը, այլ նաեւ Բաթումի-Բավրա հատվածը, որովհետեւ այս պարագայում արդեն 100 տոկոսով իր տրամաբանության մեջ տեղավորվում է մեր Յուսիս-Հարավ նախագիծը,- ասաց վարչապետը եւ հավելեց, որ Հայաստանին ու Վրաստանին հաջողվում է երկկողմ հարաբերությունները դուրս պահել աշխարհաքաղաքական ազդեցություններից, սակայն, երբ կողմերը քննարկում են ավելի ընդլայնված ծրագրեր, աշխարհաքաղաքականությունն իր ներկայությունն այդտեղ ավելի շոշափելի է ի ցույց դնում:

Նրա խոսքով, այս պահին կարող են մտածել Բաթումի-Երեւան ավտոմայրուղու մասին:

- Եթե մեզ հաջողվի այդ ծրագիրը իրականացնել, ասում են, որ Երեւանից Բաթումի կլինի մոտավորապես նույն ճանապարհը, որքան Թբիլիսիից Բաթումի: Ես չգիտեի դրա մասին, չեմ էլ ստուգել, բայց սա շատ ձեռնտու կլինի թե' Հայաստանի, թե' Վրաստանի համար: Թե' ես, թե' Վրաստանի վարչապետը սա արձանագրել ենք եւ մեր առաջիկա շփումների ընթացքում կքննարկենք այդ թեմաները,- եզրափակեց Փաշինյանը:

ՎՐԱՍՏԱՆ - ՆԱՏՕ

ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՈՐԱՑՄԱՆ ՊԱՏՐԱՍՏԱԿԱՄՈՒԹՅՈՒՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

տանի ինքնիշխանության, տարածքային ամբողջականության հարցում ալյանսի աջակցության, համագործակցության խորացման պատրաստակամությունը:

ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարը մեկ անգամ եւս հաստատեց ՆԱՏՕ-ի հավատարմությունը Բուխարեստի որոշման նկատմամբ:

ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարը հայտարարեց, որ Վրաստանը մեծ հաջողության է հասել եվրատլանտյան ինտեգրման ճանապարհին, եւ նա անպայման ի վերջո կդառնա Դաշինքի անդամ, սակայն չճշտեց ո՛չ անդամակցության ժամկետը, ո՛չ էլ այն, թե նա կկարողանա՞ արդյոք դա անել առանց Աբխազիայի ու Ցխինվալիի տարածաշրջանի: Ստոլտենբերգը նշեց, որ ՆԱՏՕ-ին անդամակցելու որոշումն ընդունում է Վրաստանն ինքը եւ Դաշինքի մյուս անդամները: Ուստի, «Ռուսաստանը կամ որեւէ այլ երկիր չի կարողանա ազդել այդ գործընթացի վրա»:

Նա մեկ անգամ եւս հավաստեց, որ Դաշինքը պաշտպանում է Վրաստանի տարածքային ամբողջականությունն ու ինքնիշխանությունը միջազգայնորեն ճանաչված սահմանների շրջանակում եւ Ռուսաստանին կոչ արեց հրաժարվել Աբխազիայի ու Հարավային Օսեթիայի անկախության ճանաչումից:

Մարտի 25-ին Վրաստանի նախագահական նստավայրում կայացավ Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլու հանդիպումը ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Յենս Ստոլտենբերգի հետ:

Ընդլայնված ձեւաչափով կայացած հանդիպմանը ներկա էին նաեւ պաշտպանության նախարար Լեւան Իզորիան, արտաքին գործերի նախարար Դավիթ Զալկալիանին եւ զինված ուժերի գլխավոր շտաբի պետ Վլադիմեր Չաչիբաիան:

- Մեզ համար մեծ պատիվ է Վրաստանում հերթական անգամ անցկացնել ՆԱՏՕ-ի զորավարժություններ: Սա ազդանշան է այն մասին, թե ինչ մակարդակում են գտնվում ՆԱՏՕ-Վրաստան հարաբերությունները, որքան բարձր է երկուստեք վստահությունը,- Վրաստանի նախագահական նստավայրում հայտարարեց Յենս Ստոլտենբերգը:

ԵՎՐԱԻՆՏԵԳՐՈՒՄ

ԴՐԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆ՝ ՎՐԱՍՏԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԳՐԱՆՑՎԱԾ ԱՌԱՋԸՆԹԱՑԻՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Նիստի ընթացքում դրական են գնահատել Վրաստանի կողմից 2014-2018 թվականներին գրանցված առաջընթացը: Ընդգծվել է Վրաստանի հաջողությունները Եվրոպայի հետ ինտեգրման ճանապարհին, որի ամենակարեւոր հաջողությունն Ասոցիացման համաձայնագրի ձեւակերպումն է: Եվրամիության հետ համագործակցության ամենակարեւոր հաջողություններից մեկը նաեւ անայցեգրային ռեժիմն է, որն արդեն հնարավորություն է ընձեռել Վրաստանի 300 000-ից ավելի քաղաքացու առանց այցեգրի մեկնել Շենգենյան գոտի մեկնել:

Նիստին, Վրաստանի բռնազավթված տարածաշրջաններում գոյություն ունեցող իրավիճակի եւ իշխանությունների խաղաղ քաղաքականության մասին զեկույցով հանդես է եկել հաշտեցման եւ քաղաքացիական հավասարության հարցերով պետնախարար Քեթեւան Ցիխելաշվիլին, որը մանրամասն զրուցել է Իրակլի Կվարացխելիայի մահվան ու ընթացող հետաքննության մասին:

Ասոցիացման կոմիտեի նիստի ավարտին Եվրամիություն-Վրաստան ասոցիացման խորհրդարանային կոմիտեն ընդունել է համատեղ հայտարարություն եւ հանձնարարականներ, որտեղ պատկերվել են Վրաստանի համար կարեւոր հարցեր:

Ասոցիացման կոմիտեն հերթական նիստը անցկացնելու է 2019 թվականի երկրորդ կեսին Թբիլիսիում:

ԿՐԹԱԿԱՆ

ՅՈԹ ՄԻԼԻԱՐԴ ԼԱՐԻ՝ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ՀԱՄԱՐ

Առաջիկա 5-6 տարիներին Վրաստանի կառավարությունը մոտավորապես յոթ միլիարդ լարի կհատկացնի դպրոցների վերանորոգման եւ կառուցման համար: Այդ մասին հայտարարեց Վրաստանի վարչապետ Մամուկա Բախտաձեն Facebook սոցցանցում ուղիղ եթերի ժամանակ:

Վարչապետն ընդգծեց, որ կառավարությունը հատուկ ուշադրություն կհատկացնի դպրոցներին, քանի որ դա ամեն մի երկրի կրթական համակարգի հաջողության գրավականն է:

- Մեր նպատակն է առաջիկա տարիներին յոթ միլիարդ հատկացնել նոր դպրոցների կառուցման եւ արդեն գոյություն ունեցողների նորոգման համար: Համապատասխանաբար, մենք կունենանք դասարաններ, որոնք համալրված կլինեն 13-15 աշակերտով, առանձին դեպքերում կարող են փոքր-ինչ ավելի լինել: Դա այն չափորոշիչն է, որը լավագույնն է համարվում, եւ առաջիկա 5-6 տարիների ընթացքում մենք այդ խնդիրը կլուծենք Վրաստանի ողջ տարածքում,- հայտարարել է Բախտաձեն: Նշենք, որ այսօր Վրաստանում գործում են 2,3 հազարից ավելի պետական ու մասնավոր դպրոցներ:

ՄԻԽԵԻԼ ԲԱՏԻԱՇՎԻԼԻ. «ԼԱԴՈ ԱԲԽԱԶԱՎԱՆ ՀԱՂԹՈՂ Է, ՀԱՂԹԵԼ ԵՆՔ ՆԱԵՎ ՄԵՆՔ ԲՈԼՈՐՍ, ԲՈԼՈՐ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԸ, ՈՂՋ ՎՐԱՍՏԱՆԸ»

Ինչպես արդեն հաղորդել ենք, «Գոբալ թիչեր 2019»-ի մրցույթի հաղթողների տասը հավակնորդների թվում էր նաեւ Լանչխութիի մունիցիպալիտետի Չիբաթի գյուղի հանային դպրոցի քաղաքացիական կրթության ուսուցիչ Լադո Աբխազավան:

Մարտի 24-ին Դուբայում, կրթության եւ հմտությունների գլոբալ ֆորումին, «Գոբալ թիչեր 2019»-ի հաղթող ճանաչվեց Քենիայի գյուղական միջնակարգ դպրոցի բնական գիտությունների ուսուցիչ, 36-ամյա Փիթեր Թաբիչին: Հաղթողը՝ որպես պարգեւ, ստացավ մեկ միլիոն դոլար: Հնդիկ գործարար Սաննի Վարքեյի բարեգործական հիմնադրամն «Աշխարհի լավագույն ուսուցչին» մրցանակը հանձնում է 2015 թվականից: Այս տարի մրցանակի համար տրվել էր 179 երկրից 10 հազար հայտ:

Չնայած, որ «Գոբալ թիչեր 2019»-ի մրցանակը շրջանցեց վրաստանցի ներկայացուցչին, Վրաստանի կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Միխեիլ Բատիաշվիլին, անդրադառնալով այդ հարցին, հայտարարեց, որ Լադո Աբխազավան հաղթող է, հաղթել ենք նաեւ մենք բոլորս, բոլոր ուսուցիչները, ողջ Վրաստանը:

- Լադո Աբխազավան մեր երկրից է, եւ հենց նրա պատճառով ես հպարտ եմ, ինչպես եւ համոզված, որ այդ զգացումը ունի ողջ Վրաստանը:

Իհարկե, նա հաղթող է, հաղթող ենք նաեւ մենք բոլորս, բոլոր ուսուցիչները, ողջ Վրաստանը:

Այսօր Լադոն բեմին կանգնած էր 179 երկրի 10 հազար ներկայացուցչից ընտրված տասնյակի հետ: Գլոբալ մրցանակաբաշխության ժամանակ այստեղ նա Վրաստանը ներկայացել է իր եզակիությամբ: Շնորհակալություն եմ հայտնում նրան ողջ Վրաստանի անունից եւ շնորհավորում այս հաջողության առիթով,- հայտարարել է Միխեիլ Բատիաշվիլին:



ՂԱԶԱԽՍՏԱՆ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԸ՝ ՆՈՒՐ-ՍՈՒԼԹԱՆ

Ղազախստանի նախագահ Կասիմ-Ժոմարտ Տոկաեւը ստորագրեց օրենքը, որը վերաբերում է Հանրապետության մայրաքաղաքի վերանվանմանը՝ Նուր-Սուլթան:

Տոկաեւը մարտի 20-ին, նախագահի երդման արարողությունից անմիջապես հետո, ձեռնամուխ է եղել մայրաքաղաք Աստանան Նուր-Սուլթան վերանվանելու նախաձեռնությանը: Նույն օրը խորհրդարանը պալատների համատեղ նիստում ընդունել է սահմանադրության փոփոխությունը՝ Աստանան վերանվանելու մասին օրենքը:

Ավելի վաղ, Աստանայում եւ Ալմաթիում տեղի են ունեցել մայրաքաղաքի վերանվանումից դժգոհողների ինքնաբուխ հանրահավաքներ:

ԵՄ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ ԵՆ ՀՆԱՐԱՎՈՐ «ԿՈՇՏ» Brexit-ԻՆ

ԵՄ-ն ավարտել է նախապատրաստությունը առանց համաձայնագրի հանրակցության կազմից Մեծ Բրիտանիայի ապրիլի 12-ի հնարավոր դուրս գալու հետ կապված:

«Քանի որ ավելի ու ավելի հավանական է, որ Միացյալ Թագավորությունն ապրիլի 12-ին Եվրոպական միությունը լքի առանց համաձայնագրի, Եվրահանձնաժողովն այսօր ավարտել է նախապատրաստությունը «կոշտ» Brexit-ի սցենարին»,- նշվում է ԵՀ-ի հայտարարության մեջ:

«Առանց գործարքի սցենարում Մեծ Բրիտանիան երրորդ երկիր կդառնա առանց որեւիցե անցումային մեխանիզմի: Այդ պահից ԵՄ-ի բոլոր առաջնային եւ երկրորդային օրենքները կդադարեն կիրառվել Մեծ Բրիտանիայի նկատմամբ»,- ասված է ԵՀ-ի հայտարարության մեջ:

ՈՒԿՐԱԻՆԱ ՄԱՐՏԻ 31-ԻՆ՝ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մարտի 31-ին Ուկրաինայում կանցկացվեն նախագահական ընտրություններ, որոնց մասնակցում է 39 թեկնածու:

Մարտի 22-27-ը Ուկրաինայի բոլոր տարածաշրջաններում, բացառությամբ Կիեւի կողմից չվերահսկվող Դոնբասի տարածքի, անցկացված հարցման համաձայն, որին մասնակցել է 18-ից բարձր տարիքի 3 հազար քաղաքացի, նախագահական վարկանիշի առաջատարը մնում է շոումեն Վլադիմիր Զելենսկին, որին պաշտպանում է հարցվածների 26,6 տոկոսը: Երկրորդ դիրքը կիսում են Պորոշենկոն ու Տիմոշենկոն, որոնց պատրաստ է աջակցել ընտրողների 17-ական տոկոսը:

ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԸ ՀԱՄԱՁԱՅՆ ՉԵՆ ԱՄՆ ՈՐՈՇՄԱՆ ՀԵՏ

ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի անդամ եվրոպական երկրները չեն համաձայնվում եւ դատապարտում են Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահի որոշումը, որի համաձայն, Դոնալդ Թրամփը ճանաչել է Գոլանի բարձունքներում Իսրայելի ինքնիշխանությունը:

Բելգիայի, Բրիտանիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի եւ Լեհաստանի կառավարությունները հայտարարում են, որ եվրոպական դիրքորոշումը չի փոխվել, եւ Գոլանի բարձունքները մնում են Իսրայելի կողմից բռնազավթված Սիրիայի տարածքներ:

ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի երեք բանաձեւ կոչ է անում Իսրայելին հեռանալ Գոլանի բարձունքներից:

Նշենք, որ Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահ, Դոնալդ Թրամփը պաշտոնապես ճանաչել է Իսրայելի ինքնիշխանությունը Գոլանի բարձունքներում:

Ճաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՀԱՄԱԺՈՂՈՎ

ՄԱՄՈՒԿԱ ԲԱԽՏԱՋԵ. «ՄԵՐ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՀԶՈՐ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐՆ ԵՆ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

կավարտենք առաքելությունը, որը դեռեւս ուներ Առաջին Հանրապետությունը՝ կվերադառնանք Եվրոպական ընտանիք,- հայտարարեց Մամուկա Բախտաձեն եւ հավելեց, որ հզոր տարածաշրջանները Վրաստանի համար առաջնահերթություն են:

Իր խոսքում, Արեւելյան գործընկերության Քաղաքացիական հասարակության ֆորումի վրացական ազգային պլատֆորմի նախագահ Նաթիա Կուպրաշվիլին նշեց, որ արդեն երրորդ տարին է, ինչ անցկացվում է այս համաժողովը, բայց այս տարի այն առանձնահատուկ է նրանով, որ ուղղված է տարածաշրջանային ոչ կառավարական կազմակերպություններին, եւ ընդգծեց, որ Վրաստանում անհրաժեշտություն կա ավելի մոտ լինել ժողովրդին:

Նաթիա Կուպրաշվիլին իր ելույթում ասաց, որ տարածաշրջանի ու կենտրոնի միջեւ կան անհավասարություններ եւ, դիմելով վարչապետին, նշեց, որ կառավարությունը պետք է աշխատի հավասարության ուղղությամբ:

Համաժողովն անցկացվում է Արեւելյան գործընկերության քաղաքացիական հասարակության ֆորումի Վրաստանի քաղաքացիական պլատֆորմի, «Քաղաքացիական հասարակության զարգացման նախաձեռնության» եւ Վրաստանի կառավարության կողմից:

ԱՅՑ

ՎՐԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ՍԵՐԲԻԱՅՈՒՄ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

կան կապերի խորացման հեռանկարները:

Այցի շրջանակներում, Վրաստանի խորհրդարանի նախագահ Իրակլի Կոբախիձեն մասնակցեց Սերբիայի մայրաքաղաք Բելգրադում Վրաստանի հյուպատոսության բացման արարողությանը:

Բելգրադում Վրաստանի պատվավոր հյուպատոս է նշանակվել Բելգրադի տնտեսական ինստիտուտի տնօրեն Դրագան Շագոնովիչը:

Պատվավոր հյուպատոսի գրասենյակում տեղակայվելու է Սերբիայում եւ Արեւմտյան Բալկանների տարածաշրջանում Վրաստանից ուղարկված առաջին դիվանագիտական ներկայացուցիչը, գործերի ժամանակավոր պաշտոնակատարը լինելու է Իլիա Կոբերիձեն:

Ապագայում Սերբիայում նախատեսվում է բացել նաեւ Վրաստանի դեսպանություն:

ՈԼՈՐՏ

ՄԵԿՆԱՐԿԵՑ «ԳՅՈՒՂԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ» ԾՐԱԳՐԻ ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼԸ

Ինչպես տեղեկացրել է Վրաստանի տարածաշրջանային զարգացման եւ ենթակառույցների նախարարությունը, այս օրերին ակտիվորեն ընթանում է «Գյուղի աջակցության ծրագրի» երկրորդ փուլը:

Այս փուլում երկրի տարբեր մունիցիպալիտետների սակրեբուլոների կողմից արդեն քննարկվել եւ հաստատվել է ավելի քան 25 մլն լարի արժողությամբ 1985 գյուղի 3038 ծրագիր: Բոլոր այս ծրագրերը բնակիչներն ընտրել են ձայների մեծամասնությամբ գյուղերի ընդհանուր ժողովների ընթացքում:

«Գյուղի աջակցության ծրագրի» երկրորդ փուլը կշարունակվի մինչեւ ապրիլի 1-ը, երկրի բոլոր մունիցիպալիտետների սակրեբուլոները պետք է մինչ այդ քննարկեն եւ հաստատեն գյուղերի կողմից ընտրված ծրագրերը:

Սակրեբուլոների կողմից հաստատված նախագծերի ծրագրային եւ շինարարական աշխատանքները ապրիլի 1-ից հետո փուլ առ փուլ կյանքի կկոչվեն:

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԱՃԵԼ Է ԱՄՈՒՍՆԱԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎԸ, ՆՎԱԶԵԼ՝ ԾՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

Վրաստանի ազգային վիճակագրական ծառայության տվյալներով, 2018 թվականին գրանցված ամուսնությունների թիվը, 2017-ի համեմատ, նվազել է 2,0 տոկոսով՝ կազմելով 23 հազար 202:

2018 թվականին առաջին ամուսնության միջին տարիքը կանանց դեպքում կազմում է 27,7, իսկ տղամարդկանց դեպքում՝ 30,4 տարեկան:

2018 թվականին գրանցված ամուսնալուծությունների թիվը կազմում է 10 հազար 288, ինչը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, աճել է 0,6 տոկոսով:

Ծառայության տվյալներով, 2018 թվականին Վրաստանում ծնելիությունը կազմել է 51 հազար 138 (նորածիններից 26 հազար 538-ը եղել է տղա, իսկ 24 հազար 600-ը՝ աղջիկ), ինչը 4 տոկոսով պակաս է, քան նախորդ տարի: Գերատեսչության տվյալներով, յուրաքանչյուր 100 նորածին աղջկան բաժին է ընկնում 107,9 տղա: 2018 թվականին առավել մեծ թվով ծնունդներ են գրանցվել Թբիլիսիում (16 հազար 161 երեխա), իսկ ամենաքիչ թվով՝ Ռաճա-Լեչխումիում եւ Քվեմո Սվանեթիի տարածաշրջանում (328 երեխա):

ԱՌԳՐԱՎՎԵԼ Է ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹՅԱՄԲ ՀՐԱԶԵՆ

Վրաստանի ներքին գործերի նախարարության տեղեկությամբ, գերատեսչությունը երկրի ողջ տարածքով վերջին երկու ամսվա ընթացքում առգրավվել է 884 սառը զենք եւ 104 միավոր ատրճանակ:

Ներքին գործերի նախարարության Սամցխե-Ջավախեթիի ոստիկանության աշխատակիցները Նինոծմինդայի մունիցիպալիտետի Օռլովկա գյուղի կենտրոնական ճանապարհին կայանված «Օպել» մակնիշի ավտոմեքենայից առգրավել են «Մակարով» համակարգի չգրանցված հրազեն: Հրազենն անօրեն գնելու-պահելու-կրելու մեղադրանքով ձերբակալել է 1989 թվականին ծնված, նախկինում դատապարտյալ Ս.Ա.-ին: Հանցանքը ենթադրում է 4-7 տարվա ազատազրկում:



ՄԱՐՏԻ 31-Ը ԶՎԻԱԴ ԳԱՄՍԱԽՈՒՐԴԻԱՅԻ ԾՆՆԴՅԱՆ ԵՎ ՎՐԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՔՎԵԻ ՏԱՐԵԼԻՑԻ ՕՐՆ Է

Մարտի 31-ին Վրաստանի առաջին նախագահ, Վրաստանի անկախության վերականգնման ազգային շարժման ղեկավարներից մեկի՝ Զվիադ Գամսախուրդիայի (1939-1993) ծննդյան օրն է: Այս տարի նա կդառնար 80 տարեկան:

Մարտի 31-ին լրացավ նաեւ Վրաստանի անկախության հանրաքվեի 28-րդ տարելիցը (1991): Այդ օրը երկրի ձայնի իրավունք ունեցող բնակչության 98 տոկոսը քվեակեց Վրաստանի անկախության վերականգնման օգտին:

ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԳՈՐԾՈՒՄ Է

Մարտի 27-ի տվյալներով, կուտակային կենսաթոշակի համակարգից արդեն օգտվում է մոտ 600 000 քաղաքացի: Նրանց մի մասի համար պարտադիր պայման է, իսկ մյուսի համար՝ ցանկություն: 40 տարին լրացած քաղաքացիները հնարավորություն ունեն չօգտվել համակարգից: Այդ կարգավիճակով, այս պահին կա մոտ 230 000 մարդ: Քաղաքացիները կարծում էին, որ համակարգից կարող են հեռանալ ապրիլի 1-ից, սակայն, կենսաթոշակի գործակալությունում նշում են, որ ժամկետն անհատական է եւ, համակարգին անդամակցվելուց 3 ամիս անց, կարող են հրաժարական դիմում ներկայացնել:

ԳՐԻԳՈԼ ՎԱՇԱՁԵՆ՝ «ՄԻԱՍՆԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՇԱԺՄԱՆ» ՆԱԽԱԳԱՀ

Մարտի 24-ին «Միասնական ազգային շարժման» կուսակցության համագումարում Գրիգոլ Վաշաձեն ընտրվեց կուսակցության նախագահ:

«Ազգային շարժման» նախագահին պատվիրակներն ընտրել են նոր կարգով: Քվեարկությունը տեղի է ունեցել էլեկտրոնային քվեարկության մեթոդով: Պատվիրակները քվեարկությանը մասնակցել են բջջային հեռախոսում հատուկ կցման միջոցով, որը, կուսակցության անդամների խոսքով, նորարարական մեթոդ է:

Քվեարկությանը Գրիգոլ Վաշաձեին աջակցել է 364 պատվիրակ, մեկը դեմ է եղել, մեկը՝ ձեռնպահ:

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՎԱՐՈՐԴՆԵՐԻ

ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ԲԱՐՁՐ ՄԱԿԱՐԴԱԿԸ՝ ՏԵԽԶՆՆՈՒՄՆ ԱՆՑՆԵԼՈՒ ԱՐԳԵԼՔ

Ինչպես արդեն հաղորդել ենք, ընթացիկ տարվա ընթացքում Վրաստանի տարածքում գրանցված տրանսպորտային բոլոր միջոցներն անցնելու են տեխնիկական ստուգում: Յուրաքանչյուր մեքենայի համար սահմանվել է տեխզննումն անցնելու ժամկետը, որի խախտման դեպքում մեքենաների վարորդները կտուգանվեն: Ավելացնենք, որ առաջին փորձից տեխզննում չանցած ավտոմեքենաների սեփականատերերին տրվում է մեկ ամիս ժամկետ՝ բացահայտված թերացումների վերացման եւ երկրորդ անգամ անվճար տեխզննումն անցնելու համար:

Այսօրվա դրությամբ, Վրաստանում գրանցված եւ տեխզննման ներկայացած ավտոմեքենաների շուրջ 40 տոկոսը այս կամ այն տեխնիկական պատճառով չի անցել ստուգումը: Հիմնական պատճառներից մեկը ավտոմեքենաներից արտանետվող գազերում թունավոր ածխածնի երկօքսիդի (CO) ավելացված պարունակությունն է: Արտանետումներում ածխածնի երկօքսիդի ավելացված պարունակության պատճառները մի քանիսն են: Մասնավորապես, ոմանց մոտ նորմալ չի գործում կատալիզատորը, որը պետք է այրի վառելիքի մնացորդները, որոնք չեն վերամշակվել ներքին այրման շարժիչի կողմից: Ոմանց մոտ խափանումների են հանգեցնում արտանետվող խողովակի մեջ անցքերի հերմետիկության համակարգը, որը նույնպես գործնականում իրենից ներկայացնում է վնասակար նյութերի բարձր պարունակության ցուցանիշ: Աղտոտված օդային ֆիլտրը, այրման համակարգում գոյություն ունեցող թերությունները կարող են նպաստել, որ մեքենան չանցնի տեխզննումը: Բացի այդ, պատճառ կարող են լինել այն հին մոտորը, որոնք, ինչպես կարգն է, պետք է փոխվեն յուրաքանչյուր 60 000 կմ անցած ճանապարհի դեպքում:

Տրանսպորտային միջոցների տեխզննումը չանցնելու երկրորդ տարածված պատճառը դիմապակու ճաքերն են, իսկ արդեն հետո յուրաքանչյուրն ունի անհատական պատճառ:

Տեխզննման ներկայացվող ավտոմեքենաների սեփականատերերին խորհուրդ է տրվում մինչեւ տեխզննումը ուշադրությամբ ստուգել բոլոր արտաքին լուսավորության սարքավորումների սարքին լինելը. սարքին պետք է լինեն մեքենայի ապակեմաքրիչները, առանձնակի ուշադրություն պետք է հատկացնել ձեռնարգելակի նորմալ աշխատանքին, անվադողերի մաշվածության աստիճանին: Ավելացնենք, որ կեղտոտ ավտոմեքենաները տեխզննման չեն ընդունում, այնպես որ, հարկավոր է մինչեւ տեխզննման ներկայացնելը հոգալ մեքենայի արտաքին մաքրության մասին:

ՍԻՄՈՆ ԿԻԼԱՋԵ

2019-Ը՝ ԹՈՒՄԱՆՅԱՆԱԿԱՆ ԵՎ ԿՈՄԻՏԱՍՅԱՆԱԿԱՆ ՏԱՐԻ

«ԱՄԵՆ ՀԱՍԱԿ ՈՒՆԻ ԻՐ ԹՈՒՄԱՆՅԱՆԸ»

Ասպինձայի մունիցիպալիտետի Դամալայի հանրային դպրոցում Թումանյանական միջոցառումները շարունակվում են:

Տարրական դասարանների ուսուցիչների նախաձեռնությամբ, անցկացվեց «Ամեն հասակ ունի իր Թումանյանը» խորագրով միջոցառում: Աշակերտները հանդես եկան բանաստեղծություններով, հեքիաթների բեմականացմամբ, Կոմիտասյան երգերով ու պարերով: Փոքրիկ դերասանները հմտորեն ներկայացրին հատվածներ Թումանյանի հեքիաթներից՝ «Քաջ Նազարը», «Սուտլիկ որսկանը», «Անբան Հուռին», «Կիկոսի մահը», «Շունն ու կատուն», «Չարի վերջը»:

Գրական մթնոլորտը միավորել էր մանուկներին ու մեծերին: Մեծերն էլ իրենց մանուկ էին զգում՝ փոքրիկների գեղեցիկ կատարումները դիտելիս: Թումանյանն այն հեղինակն է, ում յուրաքանչյուր ոք գիտի՝ դեռ գրաճանաչ չդարձած: Ամեն հասակ իր Թումանյանն ունի: Ամեն մանկան հետ ծնվում է Թումանյանը, նրա հետ հասակ առնում, նրան ուղեկցում մինչեւ խոր ծերություն: Իսկապես, ամեն տեղ ծիծաղ ու ժպիտ էր, ամեն տեղ գարուն ու արեւ, եւ ոչ միայն արեւ, այլ արեւներ, քանզի ամեն մի երեխայի հոգում մի արեւ կար ջերմացնող...

Միջոցառումը կազմակերպել էին Դամալայի հանրային դպրոցի տարրական դասարանների ուսուցչուհիներ Ծովինար Ֆարմանյանը, Արմինե Տոնականյանը, Նաիրա Համբարձումյանը: Նրաք ջանք չէին խնայել օգնելու երեխաներին ուրախ ու զվարթ երգ ու ժպիտով, գեղեցիկ բեմականացումներով ու պարերով ներկայանալու համար:

Միջոցառման ավարտին դպրոցի տնօրեն Նելլի Դուդուկչյանը իր խոսքում նշեց, որ այս շնորհաշատ երեխաները, տոգորված Թումանյանական ոգով, հաճելի անակնկալ մատուցեցին բոլորին: Նա մաղթեց երեխաներին անհոգ ու երջանիկ մանկություն: Դպրոցի տնօրենը շնորհակալություն հայտնեց նաեւ միջոցառման կազմակերպիչներին գեղեցիկ գրական մթնոլորտ ստեղծելու համար:

ՆԻՆԱ ՍԻՐԱԿԱՆՅԱՆ

Դամալայի հանրային դպրոցի հայոց լեզվի եւ գրականության ուսուցչուհի

ԿՈՄԻՏԱՍԻ ԹԻՖԼԻՍՅԱՆ ՀԱՄԵՐԳՆԵՐԸ

Կոմիտասը՝ Սողոմոն Գեւորգի Սողոմոնյանը, ծնվել է 1869 թվականի սեպտեմբերի 26-ին, Փոքր Ասիայի Քյոթահիա (Կուտին) քաղաքում, կոշկակար Գեւորգ Սողոմոնյանի ընտանիքում, որի ընտանիքը գաղթել էր Նախիջեւանի Գողթան գավառի Ցղնա գյուղից: Ծնողները երկուսն էլ մեծ սեր ունեին երաժշտության նկատմամբ:

Կոմիտասը մեկ տարեկան էլ չկար, երբ մահանում է մայրը, իսկ 10 տարեկանում կորցնում է նաեւ հորը, եւ որբուկի դաստիարակությամբ զբաղվում է հորական տատը՝ Մարիամը: Ծնողների կորուստը, առանձնապես՝ մոր, մեծ վիշտ են պատճառել ու խորը վերք թողել Սողոմոնի հոգում, եւ նրա առաջին ստեղծագործությունները նվիրված էին հենց իր մորը:

1875 թվականին Սողոմոնն ընդունվում է Քյոթահիայի քառամյա վարժարանը, սովորում չորս տարի եւ ավարտում:

1881-1893 թթ. սովորել է էջմիածնի Գեւորգյան ճեմարանում: 1984թ. ձեռնադրվել է աբեղա եւ ստացել Կոմիտաս անունը: 1895-1896թթ. Թիֆլիսում կոմպոզիտոր Մակար Եկմալյանի ղեկավարությամբ ուսումնասիրել է երաժշտական տեսական առարկաներ, ապա՝ 1896-1899թթ. ուսումը շարունակել Բեռլինի Ֆրիդրիխ Վիլհելմ արքունի համալսարանում (ներկայումս՝ Հոմբոլդտի համալսարան) եւ պրոֆեսոր Ռիխարդ Շմիդտի մասնավոր կոնսերվատորիայում:

Այստեղ նա կարդում է դասախոսություններ եւ ունենում համերգներ...

Գեորգ Բաշինջաղեան, Ղազարոս Աղայեան, Արշակ Չոպանեան, Յովհաննէս Թումանեան, Կոմիտաս, Աւետիք Իսահակեան, Վրթանէս Փափազեան 1908 թ.

Ռուս նշանավոր տեսաբան Վ.Ստասովը, ի մի բերելով 19-րդ դարի ռուսական երաժշտական կուլտուրայի զարգացման հիանալի արդյունքները եւ ըստ արժանվույն գնահատելով Պուշկինի ու Գլինկայի ռուսական ազգային գրականությանը եւ երաժշտությանը մատուցած հսկայական ծառայությունները, գրում է. «...Գլինկան ռուսական երաժշտության մեջ շատ կողմերով ունի նույնպիսի նշանակություն, ինչպիսին ռուսական պոեզիայում Պուշկինը: Երկուսն էլ ռուսական նոր գեղարվեստական ստեղծագործության նախահայրերն են, երկուսն էլ խորապես ազգային են եւ ուժեր էին քաղում իրենց ժողովրդի արմատական տարրերից, երկուսն էլ ստեղծագործեցին երկու լեզվով՝ մեկը պոեզիայի բնագավառում, մյուսը՝ երաժշտության մեջ»:

«*Այս նույն համեմատությունը, մեր կարծիքով,*- գրում է կոմիտասագետ Սամսոն Գասպարյանն իր «Կոմիտաս» (Երեւան, 1961, «Հայպետհրատ») գրքում,- *կարելի է անել նաեւ Հովհ.Թումանյանի եւ Կոմիտաս Վարդապետի առումով, ովքեր 19-րդ դարավերջի եւ 20-րդ դարասկզբի ուղենիշային դեմքերն էին հայկական պոեզիայի ու երաժշտության զարգացման բնագավառում:*

Թումանյանն ու Կոմիտասը նույնպես խորապես ազգային են եւ նյութեր էին քաղում ժողովրդի արմատական տարրերից, նրա բազմադարյան մշակույթի՝ ժողովրդական ստեղծագործության վճիտ ակունքներից: Նրանք երկուսն էլ ինքնույնն եւ ինքնատիպ են իրենց արվեստի բովանդակությամբ ու բնույթով, ազգային ոճով եւ ոգով, գեղարվեստական արտահայտչական ձեւերով, մեկը՝ մեր պոեզիայի, մյուսը՝ երաժշտության բնագավառում»:

...Բեռլինում Կոմիտասի կարդացած դասախոսությունների եւ համերգների հաջողությունների լուրը շուտով հասնում է Թիֆլիս ու մեծ հետաքրքրություն առաջացնում քաղաքի հայ հասարակության մեջ:

1905թ. մարտի 31-ի N 59-ում «Մշակ» թերթը (հիմնադիր եւ խմբագիր՝ Գրիգոր Արծրունի) տեղեկացնում է Վարդապետի Թիֆլիս գալու եւ համերգներ ունենալու մասին: Թերթը ծանուցող՝ «Հ.Կոմիտասի կոնցերտի առիթով» վերնագրով հոդվածում գրում է.

«Ուրբաթ՝ ապրիլի 1-ին, Արտիստական ընկերութեան դահլիճում կայանալու է Կոմիտաս վարդապետի ազգային համերգը, բաղկացած եկեղեցական եւ ժողովրդական երգերից: Բոլոր երգերը ներդաշնակել է ինքը՝ Կոմիտաս վարդապետը, իսկ երգեցիկ խումբը, բաղկացած է 60 հոգուց, որոնք էջմիածնի ճեմարանի սաներն են եւ Կոմիտաս վարդապետի աշակերտները:

Թիֆլիսի հասարակությունը հ.Կոմիտասի համերգից կը ստանայ այնպիսի գեղարվեստական բավականութիւն, որպիսին երբէք մինչեւ այժմ չէ ստացել հայկական համերգներից, որովհետեւ հ.Կոմիտասի ներդաշնակությունը վերին աստիճանի շքեղ է եւ գեղեցիկ, իսկ խումբը լաւ պատրաստված է դժուար կտորներ կատարելու...»:

Թիֆլիսյան համերգների եւ իրենց անցկացրած անմոռանալի օրերի մասին իր «Անմար կանթեղ» գրքում (տպագրված «Հայաստան» հրատարակչության կողմից, Երեւանում, 1969թ.) հիշատակում է Մելքոն Քրիշչյանը, ով 1899-1905 թթ. սովորել է էջմիածնի Գեւորգյան ճեմարանում եւ աշակերտել անմահ Կոմիտասին, գործակցել նրա հետ եւ ակտիվ մասնակցություն ունեցել երգչախմբի աշխատանքներում:

«Կոմիտաս Վարդապետին հրավիրում են Թիֆլիս: Հրավիրողների թվում էին Թիֆլիսի հայ արիստոկրատական «Հայ տիկնանց միությունը»՝ միության ատենապետուհի Ն.Ղամբարյանը եւ նրա ամուսինը՝ Պավել (Պողոս) Ղամբարյանը՝ Թիֆլիսի առեւտրական բանկի դիրեկտորը, մեծահարուստ տիկիններ Ն.Ալիբեգյանն ու Լ.Աջեմյանը, իշխանուհիներ Մարիամ Թումանյանը, Բեհբությանը, Երկայնաբազուկ-Արղությանը ամուսնու՝ Մամբրե Մատենճյանի հետ, ուրիշներ:

«Տիկնանց միությունը», հրավիրելով Գեւորգյան ճեմարանի երգչախմբին՝ Վարդապետի հետ, իր վրա էր վերցրել ամբողջ ճանապարհածախսն ու 3-4 օրվա խնամատարությունը: Ծախսեր, որոնք կրկնապատկվեցին, եռապատկվեցին, քանի որ, ինչպես պիտի տեսնենք, փոխան 3-4 օրվա՝ անակնկալորեն ստիպվեցինք ամբողջ 10 օր բեռ լինել իրենց վրա՝ պատճառելով նաեւ արտակարգ հոգնություններ, առանց դույզն իսկ զգալ չտալով մեզ: Երգչախումբը ելույթ էր ունենալու «Արտիստական ընկերության դահլիճում»: Մինչ ելույթը, 60 հոգուց բաղկացած խումբը պարմանիների ուղեկցությամբ, մի կամրջակի վրայով կողքի առանձնահատուկ ապակեպատ մի ընդարձակ շենք առաջնորդվեց: Այնտեղից շատ գեղեցիկ տեսարան էր բացվում դեպի փոխարքայի ապարանքը շրջապատող, խնամված, ճոխ ու փարթամ այգիները, մյուս կողմից՝ քաղաքի կենտրոնական մասի, Հայոց Վանք-Առաջնորդարանը եւ Վերայի կամուրջի տակից հոսող Քուռը: Ծանոթանալով Տփխիսի (Թիֆլիս) տեսարժան վայրերին՝ խումբը պետք է հանգստանար, բայց մենք չէինք կարողանում քնել, անհանգստանում էինք, թե ի՞նչ կլինի Հայր Սուրբի վիճակը, եթե խումբը լավ ելույթ չունենա»:

(Շարունակությունը՝ 5-րդ էջում)

ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԸՆԴԱՌԱՋ

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ՝ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐՑԵՐՈՎ

Վրաստանի Գնահատման եւ քննությունների ազգային կենտրոնը դիմորդների համար տեղեկատվական հանդիպումներ է կազմակերպում: Ինչպես հայտարարեցին կենտրոնում, արդեն բաց դռների օրեր են անցկացվել Գորիում, Ախալցիխեում եւ Ախալքալաքիում:

Հանդիպմանը կենտրոնի ներկայացուցիչները դիմորդներին եւ հետաքրքրված անձանց ներկայացնում են միասնական ազգային քննությունների գրանցման եւ այլ ընթացակարգերի վերաբերյալ տեղեկատվությունը:

Վրաստանում ապրող էթնիկ փոքրամասնությունների համար հայերենով եւ ադրբեջաներենով հրատարակվել է հատուկ օրացույց, որտեղ մանրամասն տեղեկատվություն կա գրանցման ժամկետների եւ քննությունների հետ կապված այլ կարեւոր ամսաթվերի վերաբերյալ: Օրացույցները կտրվեն դպրոցներին եւ ռեսուրս-կենտրոններին:

Գնահատման եւ քննությունների ազգային կենտրոնը տեղեկատվական հանդիպումներ է նախատեսում անցկացնել Վրաստանի տարբեր քաղաքներում:

Նշենք, որ 2019-ի ընդունելության քննությունների գրանցումը մեկնարկել է մարտի 12-ին, կշարունակվի մինչեւ ապրիլի 3-ը, ժամը՝ 18:00:

Մարտի 25-ի դրությամբ, միասնական ազգային քննությունների համար գրանցվել է 12 հազարից ավելի դիմորդ, ուսանողական դրամաշնորհային մրցույթին մասնակցելու ցանկություն է հայտնել 600-ից ավելի ուսանող, իսկ մագիստրատուրայի քննությունների համար գրանցվել է 1700 մարդ:

Ավելացնենք, որ 2019 թվականի քննությունների համար գրանցման գործընթացը այս տարի նույնպես տեղի է ունենալու մի քանի փուլով: Գրանցման առաջին փուլում դիմորդը պետք է ընտրի հանձնվող քննությունների ցանկը, նշի քաղաքը, քանի որ այս լրատվության ժամկետը լրանալուց հետո, անհնար է փոփոխել:

Գրանցման համար հայերենով եւ ադրբեջաներենով հրապարակվել է հատուկ օրացույց, որի օգնությամբ դիմորդները ստանալու են մանրամասն լրատվություն՝ կապված գրանցման ժամկետների եւ քննությունների հետ այլ կարեւոր ամսաթվերի մասին: Օրացույցները բաժանվել են դպրոցներում եւ ռեսուրս-կենտրոններում: